# 400

1. Տարինե՛ր, որ անցնում եք շատ շուտ և արագ,
Տարինե՛ր, որ թռչում եք առանց դադարի,
Լցված էիք մեղքերով և պատված՝ խավարով,
Տե՛ր Աստված, ների՛ր ինձ, ողորմի՛ր:

Թող տարիները իմ կյանքի
Ներկայությամբ Աստծո լցվեն,
Թող տարիները իմ կյանքի
Լույսով լցվեն:

2. Տարինե՛ր, Աստված է, որ կարող է օրհնել,
Տարինե՛ր, որ տրված եք վերից:
Իմ հոգու համար կա մի նոր արշալույս,
Մեկ Աստված ու Փրկիչ ունեմ ես:

3. Տարինե՛ր, իմ ներկա, իմ գալիք տարիներ,
Ես կուզեմ, որ Աստված միշտ օրհնի դրանք,
Որ ապրեմ ու ձգտեմ հոգևոր մի կյանքի,
Աստծո Խոսքին միշտ հետևեմ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025